ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԴՊՐՈՑ»

ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Խումբ՝ Կերպարվեստ

Թեմա՝ Դուդլինգ եվ զենտանգլ տեխնիկայի կիրառումը միջին դպրոցում կերպարվեստի դասերին

Հետազոտող՝ Սահակյան Լուսիկ Հենրիկի

Մասնագիտություն՝ մանկավարժ

Դասավանդվող առարկան՝ կերպարվեստ

Դասարաններ՝ 1-ից 7-րդ

Էլեկտրոնային հասցե՝

Հեռախոսահամար՝

Երեվանի համար 152 հիմնական դպրոց

Էլեկտրոնային հասցե՝ school152@schools.am

Ղեկավար՝ Ռուզաննա Փիլիպոսյան

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3
ՄԱՍԵՐ ԵՎ ԲԱԺԻՆՆԵՐ.....17
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ…….....18
ՀԱՎԵԼՎԱԾ 1 ……19
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ստեղծագործաբար աշխատող յուրաքանչյուր ուսուցիչ այս հետազոտական աշխատանքի շնորհիվ ձգտում է ավելի կատարելագործել գիտական սկզբունքների և գաղափարների վրա հիմնված իր մասնագիտական գործունեությունը, դասավանդումը դարձնելով ավելի հետաքրքիր , բազմազան և արդյունավետ, ձևավորելով աշխատանքի սեփական ոճը: Մանկավարժական փորձը ցույց է տալիս, որ դպրոցականների ստեղծագործական ունակությունների զարգացման և նրանց մոտ ստեղծագործական աշխատանքերի հանդեպ հետաքրքրության ձևավորման վրա արդյունավետ ազդեցություն ունի տարբեր ոլորտների վերաբերող գիտելիքների,մշակույթային և այլ կարողունակությունների և հմտությունների համատեղում ենթադրող գործունեությունը:

Տարիների իմ աշխատանքնային փորձը ցույց է տալիս, որ կերպարվեստի դասընթացը յուրովի ազդեցություն է թողնում երեխայի պատկերաընկալման վրա: Բացահայտելով երեխայի մտքի անսահմանափակ ունակությունները, ես նպատակային եմ համարում կերպարվեստի դասերին կիրառել դուդլինգ և զենտանգլ տեխնիկան: Zentangl-ը նոր զարգացող արվեստի ձև է, որը համատեղում է ստեղծագործությունը, մտածողությունը և հաճույքները: Գրեթե բոլորը կարող են վայելել բարդ նախշերով, հեշտ սահող մեթոդի օգնությամբ Zentangl: Իմ հետազոտոոբության արդիականությունը կայանում է նրանում, որ դուդլինգ և զենտանգլ տեխնիկայի կիրառումը դասավանդման պրոցեսում չունի սահմանափակումներ և թույլ է տալիս երեխային ազատ մտքի թռիչքով ստեղծագործել յուրօրինակ ստեղծագործական աշխատանքներ:

- Հետազոտական աշխատանքը կատարելիս իմ առջև դնում եմ հետևյալ նպատակները
- Սովորողներին ուսուցանել Dudling և Zentangl տեխնիկայի մասին գիտելիքներ:
- Սովորեցնել պատկերի մեջ ստեղծել ռիթմիկ նախշերով աշխատանքներ:
- Զարգացնել վերարտադրող և ստեղծագործական երևակայությունը:
- Ձևավորել դիտման և ուսումնասիրման արդյունքում ձեռք բերած գիտելիքները արդյունավետ կիրառելու:
- Ձևավորել ինքնուրույն աշխատելու կարողունակություններ և հմտություններ:
- Ստեղծագործական ներուժի ակտիվացման, աշխատանքի պլանավորման, արդյունքների ստացման և գնահատման արդյունքում համագործակցելու և հաղորդակցվելու կարողունակությունների ձևավորում:

ՄԱՍԵՐ ԵՎ ԲԱԺԻՆՆԵՐ

ԴՈՒԴԼԻՆԳ

Դուդլինգը (անգլերեն «doodle» «խզբզոց» բառից) պարզ ձևերով պատկեր ստեղծելու միջոց է: Կետերով, շրջանակներով, կոր գծերով և այլ փոքր տարրերով հնարավոր է բավականինին հեշտությամբ ստեղծել բարդ և գեղեցիկ պատկերներ: Իսկ ամենահետաքրքիրն այն է, որ Դուդլինգը սահմանափակումներ չունի: Դրա համար անհրաժեշտ չեն գրաֆիկական հատուկ գիտելիքներ, տաղանդ, կամ նկարչական հմտություններ: Նույնիսկ բնազդական կրկնվող գծերով կարելի է ստանալ գեղեցիկ և հետաքրքիր պատկերներ:

Դուդլինգ բառը հնչում է մի փոքր տարօինակ և վախեցնող, քանզի այն պարզապես խզբզոց է, անգիտակից գծանկար, նաև մեթոդ, որը վայելում է ժամանակակից արդիականություն:

Դուդլինգը արտացոլում է մարդու հոգեաշխարհը: Երեխան այս տեխնիկան կիրառելիս սկսում է հանգստանալ, սուզվելով իր ներքին աշխարհի մեջ: Դուդլինգ տեխնիկան կենտրոնացնում է երեխայի ուշադրությունը , վերացնում բացասական մտքերը, ուժեղացնում է աչքի շարժիչային գործունեությունը:

Մեծ Բրիտանիայում նույնիսկ նշում են դուդլինգի միջազգային օրը:



https://www.youtube.com/watch?v=_iTP7w0uzsw

ԴՈՒԴԼԻՆԳԻ ՕՐԻՆԱԿԻ ՔԱՅԼԱՇԱՐ

Գրաֆիկական ցանկացած նյութով, ձեռքի ազատ շարժումով հարթության վրա կարելի է ստանալ կոմպոզիցիա:







Աշխատանքի այս եղանակը նպաստավոր է անդրադառնում նաև նյարդային

համակարգի վրա, թույլ է տալիս ուղեղին հանգստանալ:

Այն նաև նպաստում է ստեղծագործական հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը:

ԶԵՆՏԱՆԳԼ, ՌԵԿՏԱՆԳԼ

Զենտանգլ (անգլերեն «zen» «հավասարակշռություն», «rectangle» «խորանարդ» բառից): Զենտանգլը կատարման եղանակով նման է դուդլինգին, բայց նրա ամբողջ գործընթացը պահանջում է ուշադրության կենտրոնացում:

Զենտանգլի և ռեկտանգլի հիմնական տարբերությունն այն է, որ եթե զենտանգլը ենթադրում է պատկերներ ցանկացած երկրաչափական ձևի մեջ, ապա ռեկտանգլի պատկերը ստացվում է ուղղանկյուն ձևերով:



Զենտանգլի դեպքում կարևոր է պատկերի տարրերի միջև հավասարակշռության պահպանումը:

Հավասար քառակուսիների բաժանված թղթի վրա յուրաքանչյուր քառակուսին լրացրու որոշակի պատկերով՝ կոր, գիծ, կետ, թիվ, տառ, նոտա և այլն, ապա նույնը կրկնիր հաջորդ քառակուսիների մեջ:



ԶԵՆԴՈՒԴԼԻՆԳ

Դուդլինգի և զենտանգրի համադրումը անվանում են զենդուդլինգ:

Այս համադրությունը արդյունավետ է ստեղծագործական և կատարողական հմտությունների զարգացման համար:

ԶԵՆՏԱՆԳԼ, ԴՈՒԴԼԻՆԳ ԶԱՐԴԱՆԱԽՇԵՐ

Կիրառելով զենտանգլ, դուդլինգ զարդանախշերի տեխնիկան՝ աշակերտները կարողանանում են պատկերել տարբեր առարկաներ, կենդանիներ: Շատ ավելի հետաքրքիր է գույներով աշխատանքը:







Կատարել եմ հետազոտական աշխատանք 5-րդ և 6-րդ դասարաններում՝ կիրառելով զենտանգլ և դուդլինգ զարդանախշերով տեխնիկան: 5-րդ դասարանում անկացրեցի դաս. Ստեղծել նախշեր պատկերների մեջ» թեմայով:

Դասի նպատակն էր զարգացնել և ձևավորել երեխաների ստեղխագործական և երևակայական ունակությունները: Ինքնուրույն աշխատանքի արդյունքում ձևավորել տարբեր պատկերներ՝ օգտագործելով դուդլինգ և զենտանգլ տեխնիկան: Արդյունքում ստեղծագործություններում ստացվեցին ռիթմիկ և յուրօրինակ պատկերներ: Խրախուսվեցին լավագույն աշխատնքները և գնահատվեցին:

<< Նատյուրմորտ >> թեման անցկացրեցի 6-րդ դասարանում՝ նպատակ դնելով զարգացնել պատկերավոր մտածողությունը, վերարտադրել ստեղծագործական մտքերը, ձևավորել ինքնուրույն աշխատելու կարողունակություններ և հմտություններ: Արդյունքում երեխաները ստեղծեցին նատյուրմորտներ, որտեղ արտացոլվում էր իրենց մտքի վառ երևակայական աշխարհը: Աշխատանքները յուրօինակ էին և հագեցած վառ գույներով:

ՕՊՏԻԿԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ

Օպտիկական արվեստ կամ օպ արտ (անգլ.՝ optical art, op art), 20-րդ դարի երկրորդ կեսի գեղարվեստական ուղղություն, որ հիմնված է հարթ և տարածական պատկերների ընկալման առանձնահատկությունների վրա:

Ուղղությունը շարունակում է մոդեռնիզմի տարատեսակ տեխնիցիզմի գիծը: Հարում է այսպես կոչված «երկրաչափական աբստրակցիոնիզմին», որի ներկայացուցիչն է եղել Վիկտոր Վազարելին՝ օպ արտի հիմնադիրը:

Ուղղությունը ծագել է 20-րդ դարի 50-ական թվականներին աբստրակցիոնիզմի շրջանակներում՝ առավել մեծ տարածում գտնելով 60-ական թվականներին:



Վիկտոր Վազարելի, «Խորանարդ»

Օպ արտի առաջին փորձերը վերաբերում են 19-րդ դարավերջին: Դեռևս 1889 թվականին «Das neue Universum» ամենամյա ամսագրում տպագրվել է գերմանացի պրոֆեսոր Թոմփսոնի (Thompson) հոդվածը տեսողական պատրանքների մասին: Նա օգտագործում էր սև-սպիտակ շրջանակներ, որոնք նրա նկարներում «պտտվում» են՝ ստեղծելով շարժման պատրանք հարթության վրա: Սակայն դա ավելի շուտ տեսողության առանձնահատկություններին վերաբերող գիտական հետազոտություն էր, ոչ թե արվեստ:

1955 թվականին Փարիզում իր արվեստանոցում օպ արտ է ներկայացրել Դենիս Ռենեն: Սակայն օպ արտը համաշխարհային ճանաչում է ձեռք բերել 1965 թվականին Նյու Յորքում

կայացած «Զգայուն աչք» (The Responsive Eye) ցուցահանդեսում: «Արտե Ֆիերա-77» ցուցահանդեսում, որ անց է կացվել 1977 թվականին Բոլոնյայում, ցուցադրվել են այս ուղղության

ներկայացուցիչների՝ Վիկտոր Վազարելիի, Էնիո Ֆինցիի գործերը: Հաճախ օպ արտի ներկայացուցիչները միանում են և խմբովի ցուցահանդես են կազմակերպում:

Էնրիկե Մաթոս

Օպտիկական արվեստը տեսողական պատրանքների արվեստն է, որ հենվում է հարթ և տարածական պատրանքների տեսողական ընկալման առանձնահատկությունների վրա: Պատկերը գոյություն ունի ոչ միայն կտավին, այլ նաև դիտողի աչքերում և ուղեղում:
Տեսողական պատրանքները օգնում են բացահայտելու տեսողական ընկալման օրինաչափությունները, այդ պատճառով էլ նրան մեծ ուշադրություն են հատկացրել հոգեբանները: Նրանց կառուցած տեսողական տեքստերն ունեին փորձնական բնույթ: Իրական օբյեկտների դեպքում հազվադեպ են պատրանքներ առաջանում: Այդ պատճառով էլ, որպեսզի պարզեն մարդու ընկալման մեխանիզմը, պետք է մարդու աչքը անսովոր պայմաններում հայտնվի՝ ստիպելով նրան լուծել ոչ ստանդարտ խնդիրներ: Գեշտալտ հոգեբանության դպրոցի կողմից ստեղծված երկրաչափական պատկերները հանգեցրին որոշ օրինաչափությունների բացահայտմանը, որոնցով կատարվում է տեսողական ընկալումը:

Օպարտի նպատակն է «խաբել աչքը», նրան դրդել կեղծ ռեակցիայի: Տեսողական

առումով հակասություն են առաջացնում փաստացի և թվացյալ ձևերի միջև: Օպ արտը գիտակցաբար է կիրառում այդ մեթոդը: Հոգեբանների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ աչքը միշտ ձգտում է քաոսում ցրված կետերն ընդունել պարզ համակարգով (գեշտալտ): Օպտիկական նկարչության մեջ, ընդհակառակը, պարզ, միանման տարրերը դասավորվում են այնպես, որ ապակողմնորոշեն աչքին՝ թույլ չտալով ամբողջական կառուցվածքի ընկալումը:



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Անցակցրած հետազոտության արդյունքում հասկացա , որ նկարչության ոչ ավանդական տեխնիկաները իրոք դրական ազդեցություն են ունենում երեխաների զարգացման վրա, նպաստում ինտելեկտի, հոգեկան ֆունկցիաների ձևավորմանը, ինչպիսիք են երևակայությունը, հիշողությունը, տեսողական ընկալումը և մտածողությունը:

Դուդլինգ և զենտանգլ տեխնիկայի կիրառմամբ հնարավորություն է ընձեռնվում աշակերտին ազատ ստեղծագործելու: Աշակերտների համար հոգեհարազատ է նոր տեխնիկայի կիրառումը, որն էլ մոտիվացնում է նոր և յուրօրինակ աշխատանքներ ստեղծելու կարողությունը: Աշակերտները կարողացան յուրացնել տեխնիկայի պահանջներն ու նրբությունները: Երեխաները հաճույքով են ստեղծագործում և հասկանում, որ անհնարին ոչինչ չկա:

Իմ կատարած ուսումնասիրության արդյունքները հանգեցնում են հետևյալ եզրակացություններին.

1. Սկզբունքորեն հնարավոր է նոր տեխնիկայի կիրառմամբ անցկացնել արդյունավետ դաս:
2. Հետազոտության արդյունքում բացահայտել երեխաների վառ երևակայական աշխարհը, գեղարվեստական կարողունակությունները և հմտությունները:
3. Դուդլինգ և զենտանգլ տեխնիկայի կիրառումը արդյունավետ է կերպարվեստի դասերին, քանի որ այն չունի կանոններ և տալիս է աշակերտին ազատ ստեղծագործելու հնարավորություն:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. https://hy.wikipedia.a.org/
2. http://www.cncycloped:a.am/
3. Pinterest, Google
4. Կերպարվեստի դասավանդման առանձնահատկությունները» Մ. Պետրոսյան Երևան, Մանմար 2011